ԿԱՐԾԻՔ

Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները» ԺԹ. 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության.

Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի ատենախոսական հետազոտությունը նվիրված է ժամանակակից հոգեբանության համար կարևոր և համապատասխան խնդրին՝ կապված այն հոգեբանական գործոնների հետ, որոնք դրդում են զինվորական անձնակազմին մարտական ակտիվությանը:

Վերջին տասնամյակների ընթացքում գիտական գրականությունում քննարկվում են հարցեր, որոնք կապված են տեղային ռազմական հակամարտությունների ժամանակ մարտական գործողությունների պայմաններում զինծառայողի անձի հոգեբանական աջակցության խնդրի համապարփակ վերլուծության, տվյալ խնդրի ուսումնասիրման տեսական և մեթոդաբանական հիմքերի, զինվորական անձնակազմի մարտական ակտիվության հետ: Գոյություն ունեցող ուսումնասիրությունները կատարվել են տարբեր մեթոդաբանական հիմքերով, ինչը դժվարություններ է ստեղծում դրանցում պարունակվող եզրակացությունների և դրույթների օգտագործման համար անձնակազմի մարտական պրակտիկայում: Արդյունքում, մարտական գործունեության հոգեբանական խնդիրների լուծման համար գիտնականների կողմից առաջարկված գործնական առաջարկությունների արդյունավետությունը, միշտ չէ, որ թույլ է տալիս ռազմական կառավարման մարմիններին հոգեբանական տեսանկյունից իրավասու որոշումներ կայացնել: Նման առաջարկությունների շարք հնարավոր է մշակել միայն ամբողջական տեսական հայեցակարգի և զինվորական անձնակազմի մարտական գործողությունների հոգեբանական աջակցության միասնական տեխնոլոգիական սխեմայի հիման վրա:

Ներկայումս գոյություն ունեցող ուսումնասիրություններ, որոնք ներկայացված են Հ. Դյաչենկոյի, Ա. Մ. Ստոլյարենկոյի, Վ. Վ. Սիսոևայի և այլոց աշխատություններում, նպաստում են ժամանակակից սոցիալ-հոգեբանական իրավիճակի հոգեբանական իրականության ըմբռնմանը, մասնավորապես մարտի դաշտում զինծառայողների վարքագիծն ու մարտական ակտիվությունը որոշող օրինաչափությունների, գործոնների և մեխանիզմների: Այս դրույթները հնարավորություն են տալիս զարգացնել զինվորական հոգեբանության ոլորտում այնպիսի կարևոր կիրառական խնդիր, ինչպիսին է զորքերի հոգեբանական պատրաստումը ակտիվ մարտական գործողությունների համար: Այնուամենայնիվ Լ.Ֆ. Ժելեզնյակի, Օ. Ի. Ժդանովայի, Պ. Ա. Կորչյոմնիի, Ն. Ֆ. Ֆեդենկոյի և այլոց ուսումնասիրություններում առաջարկվում է իմաստավորել զինվորական հոգեբանական գիտության առաջարկությունների և եզրակացությունների ներդրման նոր ուղիներ՝ հոգեբանական պատրաստության և անձնակազմի գործունեության հոգեբանական աջակցության շրջանակներում զորքերի մարտական և ամենօրյա պրակտիկայի կարիքներին համապատասխան: Այս պնդումները վկայում են, որ ինչպես զինծառայողի անձի

մարտական գործունեության հոգեբանության, այնպես էլ մարտական գործողությունների պայմաններում զինծառայողի անձի հոգեբանական ապահովման խնդրի ուսումնասիրման բնագավառում գիտական հետազոտությունների քանակն ու որակն, այսօր յուրահատուկ «կրիտիկական զանգված» է կազմում, որը կարող է կիրառվել զինծառայողի անձի պատրաստման հոգեբանական աջակցության գիտական հայեցակարգ կառուցելու համար տեղային ռազմական բախումների ժամանակ մարտական գործողությունների պայմաններում:

Այսպիսով, գիտականորեն հիմնավորված հոգեբանական առաջարկությունների անհրաժեշտության գիտակցումը, մի կողմից, և, մյուս կողմից, տեղային ռազմական բախումներում մարտական ակտիվության համար բարդ հոգեբանական աջակցության համակարգված տեսական և մեթոդական հայեցակարգի բացակայությունը պայմանավորեց գիտական հետազոտության արդիականությունը:

Ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունը, առաջ է քաշվում վարկածը, ունի հետազոտության նպատակն ու խնդիրները, ուրվագծվում է ատենախոսության հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի 1.1 ենթագլխում «Զինվորականի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները» ներկայացված է զինվորականի գործունեության տեսակների նկարագրությունը, ներառյալ դրա պատրաստման տեսակները, ինչպես նաև դիտարկվում են հուզական ծանրաբեռնվածությունները:

1.2 ենթագլխում ««Մարտական ակտիվություն» և «մարտունակություն» եզրույթների կիրառման առանձնահատկությունները և իմաստային տարբերակվածությունը» հեղինակը ներկայացնում է «մարտական ակտիվություն» եզրույթի մեկնաբանման նպատակահարմարությունը:

1.3 ենթագլխում «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների վերաբերյալ տարբեր մոտեցումները» հեղինակը նկարագրում է հոգեբանական գործոնների ուսումնասիրության տեսական մոտեցումները, որոնք մարդուն դրդում են արտակարգ իրավիճակներում գործունեություն ծավալել, և հատուկ ուշադրություն է դարձվում դրանց դրսևորման առանձնահատկություններին: Ս. Բաղդասարյանը կանգ է առնում զինծառայողներին մարտական ակտիվության մղող արտաքին ու ներքին գործոնների վրա:

Ատենախոսության 1.4 ենթագլխում «Զինվորական անձնակազմի հոգեբանական կայունությանն ուղղված ժամանակակից մոտեցումները» ներկայացված են մարտական պատրաստման Ժամանակակից ծրագրեր, հեղինակը կենտրոնանում է հոգեբանական ծրագրերի բովանդակության վրա:

Ատենախոսության երկրորդ «Զինծառայողների մարտական ակտիվության աստիճանի վրա ազդող հոգեբանական գործոնների հետազոտության արդյունքների վերլուծությունը» գլխի 2.1 ենթագլխում «Հետազոտության ուղղվածության հիմնավորում. հետազոտության մեթոդների համակազմը, ընտրանքը» ներկայացված են մեթոդները և հիմնավորված է հետազոտությանը ընտրանքը:

Հեղինակը մանրամասն ուսումնասիրում է մեթոդաբանությունը, քանակական և որակական վերլուծության մեթոդները, մաթեմատիկական վիճակագրությունը, որոնք օգտագործվում են փորձարարական հետազոտության համար, որտեղ «փորձարարական հետազոտություն» հասկացությունը ոչ միշտ է կոռեկտ օգտագործվում:

Ս. Բաղդասարյանը մանրամասն նկարագրում է նաև խորը հարցազրույցի մեթոդը.

Ատենախոսության 2.2 ենթագլխում «Փորձագիտական գանահատականների և կոնտենտ վերլուծության մեթոդների կիրառմամբ ստացված տվյալները» մանրամասն ներկայացված են փորձագետների հետ անցկացված խորքային հարցազրույցի արդյունքները, քննարկվում են բովանդակային վերլուծության արդյունքները, որոնց նպատակն էր վեր հանել ՀՀ զինված ուժերի զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները: Եզրակացություն է արվում, որ մարտի պայմաններում զինծառայողի մարտական ակտիվության աստիճանի վրա մեծ ազդեցություն ունի մարտական պատրաստություն, անձնային որակները, հոգեֆիզիոլոգիական վիճակը, փոխվստահությունն և փոխազդեցությունը: Ըստ հեղինակի՝ խորքային հարցազրույցի վերլուծությունը պետք է հաշվի առնի, ոչ միայն պատասխանողի պատասխանները տրված հարցերին, այլև ոչ վերբալ ազդանշանները, ինչպիսիք են դեմքի արտահայտությունները, ձայնի տոնը, ժեստերը և այլն: Սակայն աշխատանքում ընդհանրացումներ չկան ֆիզիոգնոմիկ դրսևորումների վերաբերյալ:

2.3 ենթագլխում «Զինծառայողների մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հետազոտում. հետազոտական տվյալների բազա» ներկայացված են հետազոտության արդյունքում ստացված քանակական տվյալները՝ կարևորելով հետազոտական խմբերի միջին ցուցանիշները և ստանդարտ շեղումները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել հուզական ինտելեկտի և ագրեսիվության ցուցանիշների միջև եղած տարբերությունները:

Ատենախոսության երրորդ գլխում «Զինծառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնների միջին ցուցանիշների վերլուծություն. համահարաբերակցային վերլուծություն» կատարում է համահարաբերակցային վերլուծություն: 3.1 ենթագլխում «Հոգեբանական գործոնների միջին ցուցանիշների վերլուծություն» հատուկ ուշադրություն է դարձվում մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեբանական կայունության, ռիսկի դիմելու պատրաստակամության սթրեսակայունության արդյունքների վրա: Բացահայտվել է, որ մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հուզական ինտելեկտն ավելի բարձր է, քան մարտական գործողություններին մասնակցություն չունեցածների մոտ: Հեղինակը ամենահավանական պատճառը համարել է, այն, որ հուզական ինտելեկտը բարձր է եղել և դրսևորվել է մարտական պայմաններում կամ բարձրացել է մարտի սթրեսային գործոնների հաղթահարման արդյունքում: Հեղինակի ենթադրությունները չունեն գիտական ապացույցներ:

3.2 ենթագլխում «Հոգեբանական գործոնների համահարաբերակցային վերլուծության արդյունքները» հետազոտության արդյունքները վերլուծվել են՝ օգտագործելով

վիճակագրական ծրագրեր: Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից զինծառայողների մոտ իրականացվել են հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեբանական կայունության և ռիսկի գնալու պատրաստակամության միջև համահարաբերակցային կապեր: Ինչպես նշում է հեղինակը, անձնային տագնապայնության և թշնամական ագրեսիայի միջև ամուր հարաբերակցությունը (r=208) ցույց է տալիս, որ մարտական գործողություններին մասնակից զինծառայողների կողմից դրսևորվող ագրեսիայի տեսակը կախված է նրանց տագնապայնության մակարդակից: Նշված հարաբերակցության ցուցանիշը կասկածներ է հարուցում: Վերլուծվել է նաև ստուգիչ խմբում հոգեբանական գործոնների համահարաբերակցությունը: Հեղինակը ստուգիչ բացահայտում է ուժեղ դրական հարաբերակցություններ p <0,01 զայրույթի ագրեսիայի, իրավիճակային տագնապայնության (r=245) և անձնային տագնապայնության (r=360) միջև: Սա նշանակում է, որ իրավիճակային ցածր արտահայտվածության և անձնային տագնապայնության միջին արտահայտվածությունը նպաստել են զայրույթի ագրեսիայի նվազմանը: Բոլոր տեսակի հարաբերակցությունները, որոնք կոչվում են ամուր կապեր, կոռեկտ չեն:

Ատենախոսության վարկածը հաստատելու համար ձևավորվել է լրացուցիչ փորձարարական խումբ, որում ընդգրկվել են Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից վաշտերի, դասակների, ջոկերի, գումարտակների, զորամասերի հրամանատարներ, համանուն պատերազմում աչքի ընկած զինծառայողներ: Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ նորմայի մակարդակում ագրեսիվությունը նպաստում է տագնապայնության միջին արտահայտմանը: Քանի որ ուսումնասիրվող խմբում անձնային տագնապայնությունը միջին արտահայտվածության է, և ագրեսիվության բոլոր տեսակները նորմայի մակարդակում են, կարելի է ասել, որ այս խմբում տագնապայնությունը դրական արժեք ունի: Այնուամենայնիվ, տագնապայնության կախվածությունը ագրեսիվության մակարդակից պատճառահետևանքային չէ:

Ս. Բաղդասարյանը հետազոտում է սեպտեմբերյան մարտական գործողություններին մասնակից զինծառայողների հոգեբանական կայունությունը որոշող գործոնները և հանգում այն եզրակացության, որ նրանք գտնվում են նորմալ մակարդակի վրա և կարող են ցուցաբերել մարտական բարձր ակտիվության:

Ընդհանուր առմամբ, Ս. Բաղդասարյանի ատենախոսությունն ունի ինքնուրույն հետազոտության որակներ: Աշխատանքը լավ կառուցված է, հեղինակը հետևողականորեն և տրամաբանորեն ներկայացնում է ուսումնասիրության հիմնական դրույթներն ու փուլերը, ապացուցում է իր տեսակետը: Ատենախոսության մեջ ձեռք է բերվել և վերլուծվել տվյալների մեծ զանգված, ուստի անհատական մեկնաբանությունները և առաջարկությունները չեն կարող նվազեցնել դրա բավարար գնահատականը:

Առկա դիտողություններն ու առաջարկությունները հանգում են հետևյալին.

Դիտողություն 1. Հետազոտության նպատակը իրականացնելու համար առաջնահերթ է ուշադրություն դարձնել զինվորական անձնակազմի անձնային որակների համապարփակ, համակարգային տեսական և հատուկ էմպիրիկ ուսումնասիրությանը, որպես մարտական ակտիվության աստիճանը որոշող առավել արժեքավոր հոգեբանական գործոն: Զինվորական անձնակազմի անձնային որակները, բարոյական և քաղաքական վիճակի մակարդակը,

որոնք հիմնականում որոշում են նրանց մարտական ակտիվությունը և մարտական գործողություններ վարելու պատրաստակամությունը, էմպիրիկորեն չեն բացահայտվել:

Դիտողություն 2. Կարևոր հիմնաբառերից մեկը՝ զինվորական անձնակազմի «մարտական ակտիվություն» չի ստանում կոմպլեքս տեսական և էմպիրիկ լուծում՝ որպես նշանակալի խնդիր: Զինծառայողի մարտական ակտիվությունը հասկացվում է որպես շրջապատող մարտական միջավայրի հետ նրա փոխազդեցության չափ՝ ինչպես ներքին գործընթացների, այնպես էլ արտաքին դրսևորումների տեսքով, որն ամբողջությամբ չի բացահայտվել: Ատենախոսական աշխատանքը կշահեր նաև, եթե գործնական մասում բացահայտվեր զինվորի անձի ակտիվությունը, որպես հոգեբանական հատկություն:

Դիտողություն 3. Կապված այն բանի հետ, որ հեղինակն իր վարկածում առաջ է քաշում հետևյալ ենթադրությունը «Ենթադրվում է, որ զինծառայողի մարտական ակտիվության աստիճանը ենթակա է փոփոխության, այն ուղիղ համեմատական է հուզական ինտելեկտի մակարդակին և զինծառայողի ագրեսիվության դրսևորմանը» (էջ 6), առաջանում են հարցեր. ի՞նչպես են հիմնավորվել հեղինակի կողմից նշված երկուսը՝ հուզական ինտելեկտը և ագրեսիվությունը որպես նշանակալի գործոններ: Երկրորդ՝ ի՞նչու է հեղինակը առաջ քաշել ագրեսիվության գործոնը, քանի որ ագրեսիան դեստրուկտիվ վարքագիծ է, որը հակասում է մարդկանց համակեցության նորմերին, վնասում է հարձակման թիրախներին, մարդկանց ֆիզիկական և բարոյական վնաս պատճառում կամ նրանց հոգեբանական անհանգստություն պատճառում, ինչը նեղացնում է Զինծառայողների հոգեկան վիճակների բազմազանությունը (ստենիկից մինչև ասթենիկ վիճակներ):

Դիտողություն 4. Հեղինակի պնդումը. «Հուզական իրազեկվածության, հուզական վերահսկողության, ինքնամոտիվացիայի, կարեկցանքի և սթրեսակայունության, տագնապայնության, ագրեսիվության, նյարդահոգեբանական կայունության, ռիսկի դիմելու պատրաստակամության միջև կայուն կապերը մարտական գործողություններին մասնակցած և մարտական գործողություններին մասնակցություն չունեցած զինծառայողների, թույլ են տալիս եզրակացնել, որ լարված մարտական պայմաններում մարտական բարձր ակտիվության դրսևորումը կախված է հուզական ինտելեկտի մակարդակից», կասկած է հարուցում, քանի որ հետազոտության արդյունքները հարցվողներից ստացվել են ոչ թե մարտական գործողությունների ընթացքում, այլ զգալի ուշ:

Դիտողություն 5. Եզրակացություններում հեղինակը նշում է. «Մարտական ակտիվության աստիճանը կապված է անձի հոգեֆիզիոլոգիական վիճակի, մոտիվացիայի, համոզմունքների և ցանկությունների, հուզական հատկությունների հետ», «կոնտենտ վերլուծությունը փորձագիտական հարցման հիման վրա պարզել է, որ մարտական պատրաստվածությունը, անձնային որակները, հոգեֆիզիոլոգիական վիճակը, կառավարման համակարգի արդյունավետությունը, փոխադարձ վստահությունն ու համագործակցությունը մեծ ազդեցություն ունեն ՀՀ ԶՈՒ զինծառայողների մարտական ակտիվության աստիճանի վրա»: Սակայն, զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոններին առնչվող աշխատանքում չի իրականացվում զինծառայողի անձի հոգեֆիզիոլոգիական վիճակի, նրանց մոտիվացիայի, համոզմունքների հոգեախտորոշում:

Դիտողություն 6. Բաղդասարյանը հարցվողներին տարբերակում է ըստ խմբերի՝ փորձարարական և ստուգիչ, սակայն ատենախոսության ուսումնասիրությունը չի արտացոլում հոգեբանական առանձնահատկությունների շտկման փորձարարական աշխատանքը: Գործնական առաջարկությունները կրում են ընդհանրական բնույթ, համապատասխանաբար, չեն տալիս հստակ խորհուրդներ մարտական պատրաստության արդյունավետ կազմակերպման ուղղությամբ անձնակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու համար, ինչը նվազեցնում է դիսերտացիոն հետազոտության գործնական նշանակությունը:

Կարող ենք վստահություն հայտնել, որ պաշտպանության ընթացքում բազմաթիվ դրույթների հիմնավորումն ու ճշգրտումը և լրացուցիչ մեկնաբանությունները կընդգծեն հետազոտության գիտական և գործնական արժեքը: Սեղմագիրը համարժեք կերպով արտացոլում է ատենախոսական աշխատանքի բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները» ԺԹ. 00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման» համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
հոգեբանության ամբիոնի վարիչ,
հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Բերբերյան

Նիստի քարտուղար

Ա. Ս. Բերբերյանի ստորագրությունը հաստատում եմ
Հայ - Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտ. թեկն. Ռ. Ս. Կասաբաբովա

08.01.2024թ